զայն յառաջին վիճակին, և գրեաց Հէօճմէթս երից ազգաց հաւասար կատարել զուխտս իւրեանց։ Այլ Լատինք յետ ժամանակի դարձեալ սահմանեցին զայն եկեղեցի առանց հրովարտակի, և արգելին անտի զՀայս եւ զՅոյնս. այժմ պահանջեմք ունել զբանալի և դնել սպասս և պատարագել անդ ըստ օրինակի նոցին։

10°.—Հայք ունէին վանս 'ի գիւղն Յովհաննու Մնընդեան, յանցանել աւուրց եւ ժամանակաց աւերեցաւ 'ի բարբարոսաց, և Հայք չկարացեալ նորոգել զայն թողին 'ի վիճակի իւրում։ Եւ 'ի սմին ժամանակի Լատինք միջոց գտեալ տիրեցին այգեաց և ճիթենեաց մնացորդաց չինութեան և հնութեան վանաց. պնդեն եւ հակառակին թէ ընդ ժառանգութեամբ իւրեանց իցէ։ Հայք վասն այնր տեղւոյն ունին հրովարտակս 'ի Սուլթանաց Եգիպտոսի, եւ Ծերունի բնակիչք գիւղին վկայեն ցարդ վասն այնր՝ պահանջեմք զվանս մեր։ Փակեցաւ ատեանն։

Նիստ Երրորդ, 'ի ١٨ Բեպիլ ախըր ամսոյ։

Դատաւորք ասեն. որովհետեւ խոստացան Հայք մատուցանել զվաւերական գրեանս վասն խնդրոց Լատինաց, զոր պահանջէին 'ի նոցանէ, Հայք յարուցին զերիս խընդիրս եւս ընդդէմ նոցա. այն է խնդիր Գողգոթայի, Այրին Քառասնից և վանաց Յովհաննու Մնընդեան։ Սակայն այժմ քննեսցին գրեանքն, որ վասն դատին Լատինաց եւ արձանագրեսցին յիւրաքանչիւր կարգի ըստ հրամանի Գաւառապետին և յետ այնորիկ քննեսցին երեքին խնդիրքն։

Հայք մատուցին ժողովոյն զչորս դաշնագիրս, որք էին մարգարէին Արաբացւոց, Օմարայ, Ալիա, և Սալահատինի, եւ հրովարտակս 20 յՕսմանեան Թագաւորաց, գրեալ կարգաւ յիւրաքանչիւր ժամանակի, և 6 Հէօճմէթս դատարանի. սոքա միայն վասն Գերեզմանին Քրիստոսի, որոց խմաստքն արձանագրեցան. վասն Պատանատեղւոյն հրովարտակս 5 և Հէօճմէթս 8. վասն գերեզմանի Ս. Աստուածածնի բաց 'ի հրովարտակացն՝ զորս գրեցաք, մատուցին նաեւ հրովարտակս 3 և Հէօճմէթս 4. վասն Այրին Մնընդեանն Քրիստոսի, բաց 'ի հրովարտակաց զորս